# Ք Ր Ո Ն Ի Կ

— Կովկասի փոխարքայ Կոմս Վորոնցով Տաշքով Թիֆլիզի Հայոց Առաջնորդարանը զրկեր է 16 հազար րուբլի, հայ սովեալներուն համար իբր հացագին։ Կովկասի այլ և այլ կողմերը դեռ կը շարունակէ սովը՝ հունձքին անյաջող ելքին համար։

— Վեհափառ Սուլթանը Ջատկի տօնին առթիւ շնորհած է գումարներ աղքատաց բաշխուելու համար։ Ըստի 75 հազար դահեկան խրկած է Յունաց պատրիարքարանին. 40 հազար Հայոց և 25 հազար ալ Հայ-Հռովմէականաց պատրիարքարաններուն։

— Գէորգ եպիսկոպոս Իւթիւճեանի նախագահութեամբ մասնաժողով մը գումարուեր է Մանչէսդրի Հայոց մէջ Վասպուրականի և այլ սովեալ նահանգներուն օգնութեան համար, և հանգանակութեան ելլալով հաւաքեր են 350 անգլիական ոսկի և զայն խրկեր են Պոլսոյ Պատրիարքարանը, որպէս զի հարկ եղած տեղերը բաշխուին։

— Երեւանէն Տիկին Վարսենիկ Տէր Զաքարեանց 75,000 րուբլի ստանալով ռուսական վիճակահանութենէ մը, 25,000ը նուիրեր է Կովկասի սովեալներուն համար իբրեւ հացագին։

— Կովկասի փոխարքային տրամադրութեան տակ 135,440 րուբլի դրուեր է, Էջմիածնի և Նոր Պայազիտի գաւառներու 35 գիւղերու հաց հասցնելու համար։ Յանձնուած է եւս փոխարքային 2410 րուբլի Արէշի գաւառի Մուրսալ գիւղին համար. նոյնպէս 29,270 րուբլի ալ Բորչալուի գաւառի 26 գիւղերու բնակչաց։

— Նիւ-Եօրքէն Տիկին Թէլֆէեան 1000 տոլար պարգեւեր է Ատաբազարի աղջկանց վարժարանին կից՝ վարժուհի պատրաստելու դպրոց մը բանալու համար։

— Ազգային Հիւանդանոցին մէջ վախճաներ է Դերասանուհի Տիկին Արուսեակ Պէզերճեան։ Հանգուցեալը 47 տարի առաջ (1861) առաջին անգամ երեւցեր է Արեւելեան Թատրոնի բեմին վրայ, ապագայ կարող դերասանուհւոյ մը ամէն ձիրքերն ու յատկութիւնները ցոյց տալով։

— Ամերիկացի Հայերու խումբ մը կը ծանուցանէ «մեր Ամերիկաբնակ հայրենակիցներու թէ՝ Նիւ-Եորքի մէջ կազմած ենք ընկերակցութիւն մը, որոյ անունն է «Նպաստամատոյց Միութիւն Սեբաստիոյ Ազգ. Աղքատախնամ և Լուսաբեր կազմակերպութեանց Միացեալ Նահանգաց», որոց նպատակն է Սեբաստիոյ մէջ օրէ օր շատցող աղքատներու և աղքատ ուսանողներու նիւթապէս և բարոյապէս օգնել։ Այս առթիւ կը հրաւիրենք բոլոր ազգայինները որպէս զի իրենց օժանդակութեամբ քաջալերեն միութիւնը։ Փափագողներ պէտք է դիմեն հետեւեալ հասցէին. M. Messerian, 331 & 23d St. New-York City».

— Լսեցինք որ Կոմիտաս Վարդապետ՝ իր Հայկական երաժշտութենէն պատառիկներ պիտի հրատարակէ՝ նոթայի առած։

— Բարիզաբնակ Տիկին Թագւոր փաշա փափագ յայտնած է դարձեալ բաւական գումար մը նուիրել ազգին՝ Զմիւռնիոյ մէջ վարժարանի մը հաստատութեան համար։

— Տփղիսի Հայուհեաց բարեգործական մարմինը, որ աղքատ աղջիկներուն արհեստ կը սովրեցնէ, Ապրիլ 26ին կատարեց իր 25ամեակը։ Ընկերութիւնը սկսած է Տփղիսի Ս. Նշանի Թաղային դպրոցին մէջ...։ Երբ թաղային դպրոցները փակուեցան, Ս. Նշան ալ փակուեցաւ։ Յետոյ կարուձեւի առանձին դպրոց մը հիմնուեցաւ, ուր հիմա 120 աղջիկներ կը սովրին։ 200 ընթացաւարտ տուած է ցարդ, որոց մէկ մասը կարուձեւի ուսուցիչներ են այսօր։

— Մեծ յառաջադիմական քայլերու յոյս կու տայ Հայոց Բարեգործական. Ընդհ. Միութիւնը, որուն անդամակցութեան շատեր սկսած են մտնալ, և անոր նպաստել կարեւոր գումարներով։ Արդէն Վ. սեմ. Աբրահամ փաշա Բարթողի տուած 1000 եգիպտական ոսկին և 5 ոսկի ամսավճարքը՝ մեծ օգնութիւն մ'էր Միութեանը։ Այժմ ուրիշներ ալ աւելցած են, ինչպէս Աղէքսանդրիայէն Կամսարական Եղբարք տալով 250 անգղիական ոսկի, և 25 ալ վճարք. նոյնպէս Տ. Խորասանճեան 100 անգղ. ոսկի և 12 ոսկի ալ վճարք։

— Այս Բարեգ. Միութիւնը՝ Բաղէշի արկածեալներուն 40 ոսկիէն զուրս 60 եգիպտական ոսկի ալ խրկած է։

# ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

FRANZ NIKOLAUS FINCK und LEVON GJANDSCHEZIAN. — Verzeichnis der armenischen Handschriften der koeniglichen Universitaetsbibliothek zu Tuebingen. — Tuebingen, 1907.

ՄԻՔԱՅԷԼ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ. — Դաշնակցութիւնը և նրա հակառակորդները. Թիֆլիս, 1907. գին՝ 50 կ։

— Թիֆլիզի հայուհեաց Բարեգործական ընկերութեան Քսանեւհինգամեակը. 1882-1907 XXV Թիֆլիս Ելէքտրաշարժ տպ. Օր. Ն. Աղանեանցի. Պօլիցէյսկայա 7։

ՏՈՔԹ. Յ. ԹԻՐԵԱՔԵԱՆ. — «Արտաշիր բաբական կարնամակ». պահլաւ բնագրէն թարգմանուած հանդերձ ծանօթութեամբք. — Փարիզ, բազմալեզուեան տպարան Բասմաջեանի, 3. Սիմար փողոց. 1907։ — Էջք 135, գին 5 ֆրանք։ — Հետաքրքրական և հմտալից ուսումնասիրութիւն, կարեւոր թէ պատմական և թէ լեզուաբանական տեսակէտիւ։

digitised by A.R.A.R.@